№ 7 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 14 — 1905 — ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 14 № 7

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Կիրակի, ամսիս 16-ին, Թիֆլիսի հայ կուսանաց Անապատի ս. Ստեփաննոս եկեղեցում, առաւօտեան 12 ժամին կատարվելու է ի Տէր հանգուցեալ

ՄԱՅՐԱՊԵՏ ՓԵԲՐՈՆԻԱ ԽՈՒԲԵԱՆԻ

ժահվան տարեդարձի առիթով ս. պատարագ և հոգեհանգիստ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրագիտութիւնը ժողովրդի մէջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նորից հաւասարաշխութեան մասին. Ինքնօգնութեան նշոյլներ. Նամակ Աշտարակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մայրը։

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ

Տուէք մեզ այբբենարան, տուէք մեզ սկզբնական ընթերցանութեան գիրք—ահա այն խնդիրը, որ հանում է մեզ ժողովրդական մասսաների շրջանից։

Եւ այբբենարան կամ սկզբնական ընթերցանութեան գիրք հարկաւոր է մեծ քանակութեամբ և շատ մատչելի գնով։

Երբ ասում ենք մեծ քանակութեամբ, չը պէտք է հասկանալ մի քանի հարիւր, կամ նոյն իսկ մի քանի հազար օրինակ։ Ոչ։ Մենք աչքի առաջ ունենք տասնեակ հազարներ, որովհետև գրագիտութեան կարիքը ժողովրդի մէջ շատ մեծ է և օգնել ժողովրդին պէտք է ընդարձակ ծաւալով։

Մինչև ժողովուրդը գրագէտ չը լինի, նա հնարաւորութիւն չի ունենայ մասնակից լինել այն բոլոր բարեմասնութիւններին, որ տալիս են ժամանակակից մարդուն մտաւոր կեանքը, գրականութիւնը, մամուլը։

Մենք ուզում ենք տարածել ժողովրդի մէջ գիտելիքներ առողջապահութեան, արհեստի կատարելագործութեան, քաղաքակիրթ աշխարհի առաջադիմութեան մասին. մենք ցանկանում ենք, որ ժողովուրդը գրքեր կարդալով զգուշանայ խօլերայից և հիւանդութիւններից, բարւոքէ իր գիւղատնտեսութիւնը, իր տնային արհեստը, ծանօթանայ բնութեան երևոյթների և իր երկրի պատմութեան հետ։ Բայց ինչ կարող ենք անել մենք մեր գրքոյկներով և յօդուածներով, երբ ժողովուրդը կարդալ չը գիտէ, երբ նրա համար տպագրական էջերը համր են բոլորովին։

Ժողովուրդը պէտք է գրագէտ դառնայ—դա այն կարևոր և հիմնական պահանջն է, որ դարձել է ամենահրթական հարցերից մէկը հրապարակի վրա։

Եւ պէտք է միջոցներ որոնել գրագիտութիւնը տարածելու ժողովրդական մասսաներում։ Եթէ անկարող ենք տալ փոքր ի շատէ հիմնաւոր սկզբնական կրթութիւն, գոնէ այնքան գրագիտութիւն տանք ժողովրդի ձեռքը, որ նա կարողանայ կարդալ և գրել, որ նա կարողանայ նախապատրաստվել՝ ապագայում ընթերցող լինելու համար։

Ժողովուրդը այբբենարան է պահանջում և մենք պէտք է տանք նրան այդ այբբենարանը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Համալսարանական հարցը Ռուսաստանում առաջնակարգ նշանակութիւն է ստանում։ Մի շարք քննադատութիւններ, որոնք լոյս տեսան ռուսաց լրագիրների մէջ, ցոյց են տալիս այն հիմնական պակասութիւնները, որոնք ազդում են ոչ միայն համալսարանական կեանքի, այլ և գիտութեան վրա։ Պրոֆէսոր իշխան Տրուբեցկոյ «Право» շաբաթաթերթի մէջ այսպէս է ձևակերպում համալսարանական սիստեմի պակասութիւնները։

Մեր համալսարանական հիւանդութեան էութիւնը այն է, որ համալսարանը մեր պետական կեանքի ժամանակակից պայմանների դէմ արմատական հակասութեան դիրքի մէջ է գտնվում։ Եթէ առաջներում համալսարանը հաշտ էր այդ պայմանների հետ, այդ հնարաւոր էր այն պատճառով, որ այն ժամանակ այլ էր հասարակական տրամադրութիւնը և այլ աստիճանի վրա էր գտնվում հասարակական զարգացումը։ Բոլորովին ակնյայտ է, որ այդ հակասութիւնը չի վերացվի, այլ միայն կը սաստկանայ, եթէ համալսարանական ինքնավարութիւն լինի։ Վերջին տարիներում մեր համալսարանը ամեն ինչ էր, բայց ոչ համալսարան. նրա մէջ ուսումը մի ուրիշ բան չէր, բայց միայն անտրակտ երկու անկարգութիւնների մէջ. նա կամ խաղում էր մի ինչ որ ազատ քաղաքական կլուբի անբնական դերը, կամ մտնում էր ոստիկանական հիմնարկութիւնների տիպին. ամենից քիչ նա նման էր ակադեմիական մի հիմնարկութեան։ Եւ բժշկութեան ոչ մի միջոց չէր օգնում։ Խստութիւնները և պատիժները նոյնքան անկարող հանդիսացան, որքան և սրտագին խնամատարութիւնը։ Երբ, ունենալով հասարակական ժողովների ազատութիւն, չափահաս քաղաքացիները կը ստանան հնարաւորութիւն հաւաքվելու և միասին քաղաքական հարցեր քննելու, այն ժամանակ ժողովումները համալսարանում կը կորցնեն հողը ոտների տակ։ Երբ օրէնքը կապահովէ անձնաւորութեան անձեռնմխելիութիւնը, տպագրական և բերանացի խօսքի ազատութիւնը, դաւանութիւնների ազատութիւնը—այն ժամանակ համալսարանը կը կորցնէ հրաբուղխի իր ներկայ բնաւորութիւնը և կը դառնայ մի խաղաղ տեղ ուսանելու համար։ Մինչև որ չի բականանայ այս արմատական ըէֆօրմը, չարժէ խօսել համալսարանական որ և է ըէֆօրմի մասին։ Այժմեան ժամանակ Ռուսաստանը կանգնած է մի ճակատագրական դիլեմայի առջև. նա պէտք է կամ բոլորովին հրաժարվի բարձրագոյն կրթութիւնից, կամ ստեղծէ իր մէջ այն պայմանները, որոնք հնարաւոր են դարձնում այդ կրթութիւնը։ Ընտրելով այս կամ այն ճանապարհը, մենք պիտի անցնենք մինչև նրա վերջը, խուսափելով կոստաբեր անհետևողականութիւնից և երկդիմութիւնից։

ՆՈՐԻՑ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

I

Վերջին ժամանակներում Կովկասում նորից արծարծվեց մի հին, շատ հին խնդիր, այլացեղ և այլակրօն ժողովուրդների հաւասարաշխութեան և եղբայրութեան խնդիրը։

Այդ հարցը այնքան պարզ, այնքան ըմբռնելի է իր էութեամբ իւրաքանչիւրի համար, նրա շահաւէտ կողմերը այդքան քննված, այնքան ապացուցված ճշմարտութիւններ են, որ այդ մասին նորից խօսելը հատարում ենք միանգամայն աւելորդ և ապարդիւն։

Որքան այդ խնդիրը շօշափվել է տեսականապէս, որքան այդ առիթով յայտնվել են նպաստաւոր կարծիքներ, բարի ցանկութիւններ, հաւակրանք և սիմպատիա, այդ շատ և շատ բաւական է։

Մենք, այժմ, ուզում ենք այդ խնդիրը շօշափել գործնական տեսակէտից, թէ ինչ կերպ կարելի է այդ հարցը դնել իրական հողի վրա, ո՞րն է այն հնարաւոր ուղին, որով կարելի լինի հասնել ցանկացած նպատակին։

Այն միջոցները, որոնք գործադրվեցին վերջին ժամանակներում այդ խնդրի արծարծման հետ միաժամանակ շատ քիչ են՝ ցանկալի նպատակը իրագործելու համար։

Ինչո՞ւ։

Որովհետև նրանք բարի ցանկութիւնների, հաւակրանքի և տեսական պալիատիվ միջոցներից այն կողմը չեն անցնում։ Իսկ այն բոլոր միջոցները, որոնք, կրկնում ենք նորից, գործնականի չեն անցնում, նրանք մնում են մեռած տառ, ապարդիւն և եթէ մի շատ կարճ ժամանակով կարողանում են բարքերի վրա մեղմացնող ազդեցութիւն թողնել, այդ էլ լինում է շատ կարճատև, թեթևակի, որից յետոյ մի փոքր առիթ ներկայանալիս յարաբերութիւնները նորից լարվում են, ընդունում իրանց նախկին կերպարանքը և ամեն բան սկսում է ընթանալ իր նախկին ձևով։

Այսպէս, օրինակ, համերաշխութեան մասին վերջերումս խօսեց Կովկասեան մամուլի լաւագոյն մասը, նաև «Շարքի Ռուս» թուրք լրագիրը, չը նայած որ նա միաժամանակ շօշափեց մի երկու այնպիսի խնդիրներ, որոնք իրանց կեղևով կարող էին հակառակ ազդեցութիւն թողնել ընթերցող դասի վրա։ Հասարակութեան մէջ, ժողովրդական խաւերում համերաշխութեան մասին աւելի շատ խօսվեց քան մամուլի մէջ։ «Ինչ ունենք միմեանց հետ կիսելու, միմեանց հետ կուելու», այդպիսի դարձուածքներ այժմ կարելի է լսել ամեն տեղ, ուր հայ և թուրք ժողովուրդներ միասին են ապրում։ Նոյն իսկ մի քանի գիւղական հասատատութիւնների մէջ Երևանի նահանգում, ուր հայ և թուրք տարրերը ընդհարումներ էին ունեցել կողմակի միջամտութիւնների էին քթթում, հեռուից ծիծաղում և խորհրդաւոր նշաններ անում։ Տիրամայր-Աստուածածնի պատկերը՝ մանուկ Յիսուսին իր գրկի մէջ առած՝ սաւառնում էր խորտնի վերև։

Լևոնը նկատեց, որ այդ օրը ոչ միայն եկեղեցին ու սուրբերն էին զուարթ, այլ և մարդիկը, որ սովորաբար լուռ էին, տրտում և մըտախոհ։ Երգեցողութիւնն անգամ անոյշ, դիւթական ու ներդաշնակ էր։ Ամենօրեայ լալկան, պաղատագին ու երկարաձիգ շարականների փոխարէն, եկեղեցու կամարները թընդում էին մի յաղթական, բարձր ու պայծառ երգի ելևէջներով։

Փոքրիկ Լևոնը հիացած, յափշտակված, կարծես փոխադրված մի ուրիշ, մոգական, անծանօթ աշխարհ՝ դիտում էր. դիտում էր առանց տեսնելու, առանց զգալու...։ Խունկի բուրմունքը, շարականների դաշնակաւոր օրօրը, լոյսերի հաճելի խաղտումը, եկեղեցու գաղջ, խաղաղ մթնոլորտը նրան թմբեցրին...

Նա տեսաւ իր առաջ կանգնած մի փառաւոր տուն, երփներանգ, շքեղ, ծաղկազարդ պարտէզով։ Ա՜հ, նա ճանաչեց, այդ նրանց նախկին բնակարանն էր։ Ահա պարտէզի ճաղաւոր դուռը, որ միշտ կողպված էին պահում, որպէս զի նա մենակ չը գնայ պարտէզ և չընկնի աւազանի մէջ։ Ահա, բակի մի անկիւնում տան պահապան, հաւատարիմ Տօռքի ընիկը, որի վրա յաճախ էր բարձրացել, Նուշիկի՝ դրացուհու հասակակից, չարաճճի, ուրախ աղջկայ հետ։ Նրանք մօտ մի տարի էր, որ թողել էին այդ տունը և այժմ բնակվում էին մի խեղճ, աղքատիկ, տխուր տնակի մէջ, որը բնաւ պարտէզ չունէր։ Նա յիշում էր, որ իրանց գեղեցիկ բնակարանը փոխեցին մի շաբաթ յետոյ այն սոսկալի, անմոռանալի օրից, երբ նա լսեց փողոցում զէնքի պայթիւններ, գոռում, գոչում, մարդկանց լեռապատառ կոչեր, դռների շառաչաձայն խորտակումներ, որոնք ստիպել էին նրան ճչալով փախչել իր մօր գիրկը։ Մայրը նոյնպէս դողում էր ամբողջ մարմնով և հազիւ կարող եղաւ ապաստանել մի ծածուկ դռնից, տան առաստաղի տակ։ Նրանք երկուսը միասին, շունչները բռնած, իրար պինդ փաթաթված, իրանց մարմնով, իրանց ներկայութեամբ իրար տաքացնելով, իրար պաշտպանելով, իրար սրտապնդելով մի ամբողջ ժամ սպասեցին այնտեղ, մինչդեռ վարը կոտրտվող հայելիների, փշուր փշուր եղող թանկագին շիշերի, բաժակների, սպասների խուլ ժխորն ու այս ու այն կողմ վազող, միմեանց կանչող, միմեանց խրախուսող, միմեանց հայհոյող մարդկանց հրճուանքի, բարկութեան, վրէժի, մերթ սուր, մերթ խռպոտ, մերթ ուրախ ու մերթ ցասկոտ, վայրագ աղաղակներն էին բարձրանում անընդհատ...

Երեկոյեան հայրիկը չը վերադարձաւ շուկայից։ Երբ մայրիկին հարցրեց, նա շփոթված, լալագին պատասխանեց, որ հայրիկը գործով գնացել էր մի հեռու քաղաք։ Լևոնը օրերով, շաբաթներով սպասեց։ Կաղանդը մօտ էր, նա յուսաց որ հայրիկը գոնէ կաղանդին կը գայ, ամեն տարվայ պէս գեղեցիկ ընծաներ կը գնէ, նրանց վերստին կը բնակեցնէ պարտիզաւոր մեծ տան մէջ և մանաւանդ թոյլ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՅՐԸ

(Պատմուածք Տիգրան Զաւէնի)

Ճրագալոյցի երեկոն էր։ Ձիւնը սպիտակ, փոքրիկ թիթեռնիկների անսահման, խօլ երամի պէս թռչկոտում էր օդի մէջ, դարձ դարձիկ իջնում և ծածկում էր կտուրները, ծառերի գագաթները, փողոցներն ու ճանապարհները։ Ու ձիւնի հատիկների հետ, մութը՝ ամպամած, ցածր ու գորշ երկնքից դանդաղօրէն մաղվում էր երկրի վրա, ծածանեցնելով, ջնջելով տների, շինութիւնների և առհասարակ բոլոր իրերի և առարկաների շրջագիծը։ Փողոցների շները ապաստանել էին տանիքների դուրս կարկառող մասերի տակ. ցռուկները թաթերի մէջ առած, կուչ եկած։ Մարդիկ՝ վերարկուների օձիքը վեր դարձրած՝ շտապով հեռանում էին։ Ձիւնի քուլաները՝ անհուն տարածութիւնների մէջ երկար ու հև ի հև թափառելուց յոգնած՝ գալիս հանգչում էին նրանց անձրևանոցների, գլխարկների, վերարկուների, բեխերի վրա, մտնում էին նրանց ականջների, բերանի մէջ...

Ու սպիտակ փողոցներից, ամեն հասակի, ամեն դասակարգի մարդկանց երկսեռ բազմութիւն տենդոտ քայլերով ուղղվում էր դէպի Մայր Եկեղեցի։

Փոքրիկ Լևոնը՝ մօր հետ խաչակնքեց ու, հեռուը, ծանօթանայ բնութեան երևոյթների և իր երկրի պատմութեան հետ։ Բայց ինչ կարող ենք անել մենք մեր գրքոյկներով և յօդուածներով, երբ ժողովուրդը կարդալ չը գիտէ, երբ նրա համար տպագրական էջերը համր են բոլորովին։

Ժողովուրդը պէտք է գրագէտ դառնայ—դա այն կարևոր և հիմնական պահանջն է, որ դարձել է ամենահրթական հարցերից մէկը հրապարակի վրա։

Եւ պէտք է միջոցներ որոնել գրագիտութիւնը տարածելու ժողովրդական մասսաներում։ Եթէ անկարող ենք տալ փոքր ի շատէ հիմնաւոր սկզբնական կրթութիւն, գոնէ այնքան գրագիտութիւն տանք ժողովրդի ձեռքը, որ նա կարողանայ կարդալ և գրել, որ նա կարողանայ նախապատրաստվել՝ ապագայում ընթերցող լինելու համար։

Ժողովուրդը այբբենարան է պահանջում և մենք պէտք է տանք նրան այդ այբբենարանը։

ճեղքելով բազմութիւնը մտաւ ներս։ Ա՜խ, որքան տաք էր եկեղեցում, որքան լաւ էր։ Երբ մրսած մարմինը մի քիչ առուգացաւ, նա սկսեց դիտել շուրջը։ Նրան թւաց, թէ այդ եկեղեցին իրանց սովորական, պարզ ու անշուք ժամը չէր։ Նա բոլորովին կերպարանափոխ էր եղել։ Փեսայի առաջ դուրս գալու պատրաստվող հարսի նման զուգվել, զարդարվել էր ու լոյսերի մէջ լողում էր։ Գմբէթից՝ եկեղեցու մէջտեղում կախվող մեծ, փալփլուն, յախճապակեայ ջահը այդ երեկոյ վառել էին, նա արեգակի պէս ճառագայթում ու լուսով ողողում էր ընդհանրապէս մութի մէջ ընկղմված ահագին եկեղեցին։ Ու խունկի կապոյտ, գալարուն, թեթև պալանների հետ, եկեղեցում ծփում էր մի անբացատրելի, բերկրող, երանաւէտ բան։ Սրբերի պատկերներն անգամ այդ օրը տարբեր արտայայտութիւն ունէին։ Ոմանք ժպտում էին մի անսահման բարի, յուսապնդող ժպիտով։ Ոմանք էլ նայում էին դիտողի ճիշդ աչքերի մէջ երկար, երկար, քաղցր ու բարեկամաբար։ Ամենքը գոհ էին. խոժոռադէմ սրբերն իսկ, նրանց առաջ վառվող մոմերի արձակած դալուկ, դողդոջուն լոյսի մէջ խայտում էին. նրանց հայեացքը՝ թաւշի նման մեղմ ու գգվող՝ ընկնում էր հաւատացեալների վրա։

Օ՜, հրաշալի էր մանաւանդ խորանը։ Նա ամբողջապէս սպիտակներով էր ծածկված։ Կարծես անհամար հրեշտակներ իրանց ձիւնաթոյր թևերի ճերմակութիւնն ու անմեղութիւնն էին թօթափել այնտեղ։ Նրա աստիճանների վրա զետեղված անթիւ ջահերները իրանց բիբերն էին քթթում, հեռուից ծիծաղում և խորհրդաւոր նշաններ անում։ Տիրամայր-Աստուածածնի պատկերը՝ մանուկ Յիսուսին իր գրկի մէջ առած՝ սաւառնում էր խորտնի վերև։

Լևոնը նկատեց, որ այդ օրը ոչ միայն եկեղեցին ու սուրբերն էին զուարթ, այլ և մարդիկը, որ սովորաբար լուռ էին, տրտում և մըտախոհ։ Երգեցողութիւնն անգամ անոյշ, դիւթական ու ներդաշնակ էր։ Ամենօրեայ լալկան, պաղատագին ու երկարաձիգ շարականների փոխարէն, եկեղեցու կամարները թընդում էին մի յաղթական, բարձր ու պայծառ երգի ելևէջներով։

Փոքրիկ Լևոնը հիացած, յափշտակված, կարծես փոխադրված մի ուրիշ, մոգական, անծանօթ աշխարհ՝ դիտում էր. դիտում էր առանց տեսնելու, առանց զգալու...։ Խունկի բուրմունքը, շարականների դաշնակաւոր օրօրը, լոյսերի հաճելի խաղտումը, եկեղեցու գաղջ, խաղաղ մթնոլորտը նրան թմբեցրին...

Նա տեսաւ իր առաջ կանգնած մի փառաւոր տուն, երփներանգ, շքեղ, ծաղկազարդ պարտէզով։ Ա՜, նա ճանաչեց, այդ նրանց նախկին բնակարանն էր։ Ահա պարտէզի ճաղաւոր դուռը, որ միշտ կողպված էին պահում, որպէս զի նա մենակ չը գնայ պարտէզ և չընկնի աւազանի մէջ։ Ահա, բակի մի անկիւնում տան պահապան, հաւատարիմ Տօռքի ընիկը, որի վրա յաճախ էր բարձրացել, Նուշիկի՝ դրացուհու հասակակից, չարաճճի, ուրախ աղջկայ հետ։ Նրանք մօտ մի տարի էր, որ թողել էին այդ տունը և այժմ բնակվում էին մի խեղճ, աղքատիկ, տխուր տնակի մէջ,

շնորհիւ, կարելի եղաւ հաշտութիւն կայացնել և խաղաղութիւնը վերականգնել։

Մի աւելի շոշ-փելի փաստ այս հարցի նըկատմամբ հայերի կողմից տեղի ունեցաւ հէնց այս վերջերում։ Լրագիրները գուժեցին Պարսկաստանի պարսից կրօնապետ Նաջաֆի մեծ Մուշտէիդ մօլլա Մահմէդ Շարաբանցու մահը։ Այդ լուրը առնելով մի քանի քաղաքների (Գանձակ, Շուշի, փոքր Երևանում) հայ ժողովուրդները միացան հոգևոր ներկայացուցիչների հետ, այցելեցին թուրք հասարակութեան մզկիթների մէջ և յայտնեցին իրանց ցաւակցութիւնը նրան իր կրած մշտի առիթով յանձին արժանաւոր կրօնապետի։

Այս բոլորը գեղեցիկ փաստեր են, որոնց մենք սրտի գոհունակութեամբ արձանագրում ենք, սակայն այսքանը բաւական չէ խնդիրը լուծելու համար։ Օրինակ, ի՞նչ կասէք, ինչ անուն կը տաք, երբ տեսնէք քաղաքային ընտրութիւնների ժամանակ ցեղային սոսկալի պայքար, քաղաքային խորհրդի ժողովից մի ցեղի պատկանող ձայնաւորների խմբովին հեռանալը միւս ցեղին պատկանող ձայնաւորների հակառակութիւնը պատճառ բերելով։

Այսպիսի ոչ ցանկալի երևոյթներ տեղի ունեն այժմ շատ տեղեր, տեղի կունենան սրանից յետոյ, քանի որ գոյութիւն կունենան տարբեր ցեղերի ուրոյն շահեր։ Եւ եթէ մենք ուզում ենք ցեղական վէճերը և պայքարները վերանան, պիտի մենք վերացնենք շահերի, ընդհարման առիթների բաժանումը, ուրոյն լինելը, այլապէս մենք անվերջ կանգնած կը լինենք ցեղական ընդհարումների վրտանգի առաջ։

Եւ եթէ մենք ուզում ենք հաւասարութեան գաղափարը մտցնել մեր ժողովուրդների մէջ արմատական կերպով, որ նա գտնէ իրականութիւն, անհրաժեշտ են այնպիսի միջոցներ, որոնք տարբեր ցեղերի ժողովուրդներին բերեն և կապեն միմեանց հետ նաև տնտեսական շահերով, որոնք շահերը միացնեն և դարձնեն ընդհանուր։

Բայց թէ որո՞նք են այդ միջոցները, այդ մասին յաջորդ անգամ։

Ա.-Դ.

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԵԱՆ ՆՇՈՒՅՆԵՐ

(Նամակ Բալախանիից)

—

Ինքնօգնութեան գիտակցութիւնը կամացկամաց մուտք է գործում և մեր մէջ։ Մեզ մօտ, Բալախանում, հարստահարութեան գործում նշանաւոր տեղ են բռնում նաև խանութպանները։ Ահա այդ «պստիկ, բայց չստիկ» տզրուկներից պաշտպանվելու համար է, որ կազմակերպվում է այստեղ, Փիթոյեանի ընկերութեան գործարանում, սպառողական մի փոքրիկ, բայց համակրելի ընկերութիւն, որը եթէ չեմ սխալվում Բագու-Բալախանիի շրջանում միակն է։

Այդ նոր կազմակերպվող ընկերութեան ծրագիրը կազմված է Եւրոպայի բանւորական վայրերում գոյութիւն ունեցող սպառողական ընկերութիւնների օրինակով։

Սակայն չէ կարելի չարձանագրել մի ուշագրաւ, բայց և սովորական երևոյթ, որ մեր սպառողական ընկերութեան մէջ օրեկան 50 կոպէկ ստացող մշակն էլ է մի բուբլի տալիս ամսական, մի ձայն և միատեսակ իրաւունք ունենում, ամսական 800 բուբլի ստացող կառավարիչն էլ։

Սպառողական ընկերութեան խանութից ստացած զուտ արդիւնքը (ծախսերը դուրս եկած) պիտի բաժանվի անդամների վրա։ Մեր սպառողական ընկերութեան խանութը պիտի կառավարվի սպառող-անդամների կողմից ընտրված տասներեք հոգուց բաղկացած լիազօր յանձնախմբի հերթական հսկողութեամբ, թէև խանութում մշտական լինելու են մի գործակատար և մի բանւոր։ Անդամներս կազմվենք մի քանի կողմից. նախ՝ որ մենք կը ստանանք ընկերութեան խանութից թարմ ու էժան ապրանք՝ երկրորդ ընկերութեան խանութին մեր տուած զուտ արդիւնքը մեզ կը մնայ։ Ինչպէս տեսնում էք երևոյթը ոգևորիչ է, աջակցութեան և քաջալերութեան կարօտ։

Մինչդեռ այսպիսի մի ընկերութիւն մեզանում, Բալախանիում, նորութիւն է՝ կուլտուրապէս և տնտեսապէս բարձր կանգնած երկրների բանւորական վայրերում նման ընկերութիւնները միլիոնաւոր սպառող անդամներ ունեն։ Հետևենք նրանց, այս է թելադրում առաջադիմութեան օրէնքը։ Մենք մեզ օգնենք, որ Աստուած էլ օգնէ. խմբվենք միացեալ ոյժերով և փոխադարձ օժանդակութեամբ օգնելու մեզ, այնպիսի գործի ձեռնարկելու, որ լինի յօգուտ հանրութեան, որից բոլորս օգտվենք։

Այս գործի նախաձեռնողը մեր դիպլօմաւորներից չէ։ Բաւ լինի։ Պարոնի աջակցութեամբ պ. կառավարիչը գործարանի բակում խանութի համար տուն յատկացրեց և խոստացաւ ժամ ապագայում հաց թխելու փուռ շինել տալ։

Մի քանի խօսք ևս մեր կրթված դիպլօմաւորների մասին. այդ պարոնները, ինչպէս ամէն մի հասարակական գործում, նոյնպէս և այս դէպքում ձեռները լուացին յետ կանգնեցին. նրանք չը քաջալերեցին իրանց հեղինակաւոր աջակցութեամբ, չարին այն, ինչ որ կարող էին անել։

Կեանքի մէջ մտնելուց յետոյ նրանք ժողովրդի հետ չեն ապրում (չեմ ասում ժողովրդին ծառայում, թէև իրանք այս խոստանում են ուսանողական որոտընդոստ ճառերով)։ Կըզրկացած իրանց շրջանից, յղփացած կեանք վարելով, հարստանալու անյագ տենչով լցված դառնում են ամենահզօր կապիտալի կատաբեալ ստրուկներ։ Յուսատու բացառութիւններ կան, ի հարկէ, որոնց չէ վերաբերում խօսքս։

Սուրէն

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

—

Յունվարի 7-ին

Աշտարակի փոխատու-խնայողական ընկերութեան բանկը բոլորեց իր գոյութեան երկրորդ տարին։

Այսին 3-ին, ցերեկով, տարբական երկդասեան դպրոցում նշանակված էր այդ հիմնարկութեան հաւատարմատարների տարեկան ժողովը։ Ժողովին հարիւր հաւատարմատարներից ներկայ էին 52 հոգի, և հետաքրքրվողների մի զգալի թիւ։ Մարդիկ եկել էին անձամբ լսելու ժողովի որոշումները։ Ըստ կանոնադրութեան ժողովը բացված համարվեց։

Ժողովի զբաղմունքի առարկան էր՝ վիճակով հեռացող-ծառայող անձերի տեղ նոր ընտրութիւն և ընկերութեան գործունէութեան 1904 թուականի հաշուետուութիւնը։

Ժողովի նախագահ ընտրվեց պ. Ա. Շահնազարեան։

Խորհրդի նախագահ պ. Գէորգէրիձէն ներկայացրեց բանկի անցեալ տարվայ հաշիւը։

Ընկերութիւնը 1904 թուականի սկզբին ունեցել է 875 անդամ՝ Աշտարակից և շրջակայ գիւղերից, նոր անդամ լինելու խնդիրը տրված է 85, որից յարգվել է միայն 34-ը, ընկերութեան անդամութիւնից հեռացվել են, ոչ պարտաճանաչ լինելու պատճառով, 90 հոգի, սեփական ցանկութեամբ հեռացել են 5-ը, մահացել են 12, այնպէս որ տարվայ վերջը ընկերութիւնը բաղկացած էր 802 անդամից։ Փայաբաժիններ մտցրած են 31,299 բուբլի 55 կոպէկ, դուրս եկած փայատէրերին տրված է 2,404 ր., ընկերութեան դրամարկղում եղել է 3,353 ր. 74 կ. օտար դրամ։ Բանկի անցեալ տարվայ ամբողջ շրջանառութիւնն եղել է 131,677 ր. 17 կոպէկ։

Ստացած տոկոսների արդիւնքից ընկերութիւնը պետական հարկ վճարել է 165 ր. 23 կ., վարչութեան անդամներին ռոճիկ, ծառայի, բնակարանի և վառելիքի ծախք եղել է 764 ր. 37 կ., փայատէրերին տրված է, որպէս տոկոս, 1,751 ր. 65 կ., և 10 ր. 84 կ. պէտք է ուղարկել Պետերբուրգի այդ մասի կոմիտէին գրքերի, բլանկների փոխ։

Դուրս գալով բոլոր ծախքերը, ընկերութիւնը 1904 թուի մէջոցում ունեցել է 675 բուբլի զուտ աշխատանք։

Ժողովը այդ աշխատանքից մի հարիւր բուբլի յատկացրեց Աշտարակի հասարակութեան, դիմելու ուր հարկն է և բանալու հասարակական գրադարան-ընթերցարան։ Ցանկալի է, որ որքան կարելի է շուտ գլուխ բերվի յիշեալ հիմնարկութիւնը։

Մի հարիւր բուբլի էլ նուիրեց խորհրդի նախագահ պ. Գէորգէրիձէին, որպէս խրախոյս նրա՝ ընկերութեան ցոյց տուած ջանքերի։ Բայց պարոնը չընդունեց և խնդրեց ժողովից փողը յատկացնել մի բարեգործական նպատակի։ Մէկի առաջարկութեամբ և բոլորի հաւանութեամբ վճռվեց այդ հարիւր բուբլին ընծայ բերել «Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան»։ Ահա մի լաւ օրինակ, որը պատիւ է բերում ընկերութեան անուան։ Երկու ազգերի եղբայրական ապացոյց, երկու հարևանների մէջ թշնամութեան որոմներ ցանողներին մի խրատիչ ապտակ... Իսկ մնացած փողն էլ վճռեց աւելացնել ընկերութեան պահեստի գումարին։

Ժողովի նախագահի առաջարկութեամբ ընտրվեցին երեք հոգի հաշուեհեռներ, որոնք ստուգելու և ներկայացնելու են յետագայ ժողովին վարչութեան գործունէութեան մասին մանրամասն հաշիւ։ Այս նոր մարմինը մի տարի գոյութիւն է ունենալու։

Ապա վիճակով հեռացող վարչութեան մէկ անդամի և խորհրդի երկու անդամի տեղ ընտրվեցին նորերը։

Ժողովրդի մէջ «փրսփրսուկներ» կան, որ ընկերութեան դրամագլուխներից օգտվում են գլխաւորապէս հարուստներն ու առևտրականները։ Եւ այդ էր պատճառը, որ վերջում նախագահը ժողովի քուէարկութեան դրեց այսպիսի մի բանաձև. «եթէ երկու անդամ, մի հարուստ և մի աղքատ, փող են ուզում վարչութիւնից, պէտք է առաւելութիւնը տրվի վերջինին», որովհետև կազմակերպութեան հէնց բուն նպատակն է չքաւոր գիւղացի անդամների տնտեսական դրութեան բարւոքման նպաստել։

Պարոնի առաջարկութիւնը դիպաւ հարուստ հաւատարմատարների շահերի զգացմունքներին։ Իրանց պատճառաբանութիւններով միջից կէս էին լինում և ուզում էին սասանեցնել միւսներին, որ եթէ փողն իրանց օգտին չէ ծառայելու, յետ կը վերցնեն իրանց փայաբաժինները, պարզ ասած, կը նպաստեն ընկերութեան քայքայման, չը նայելով որ ստանում են ութ տոկոս շահ։ Վերջում ընդունվեց միջին ճանապարը, որ երկու դասակարգերը միմեանց վերաբերեալ զիջող լինեն։

Պէտք է ասել, որ ներկայ պատերազմն ազդել է և այս հիմնարկութեան վրա, որովհետև պատերազմի պատճառով պետական բանկերը փող չեն բաց թողել, ուստի ընկերութեան միջոցները սուղ են եղել, և չէ կարողացել բոլոր պահանջներին բաւարարութիւն տալ։

Ի դէպ, ցանկալի է, որ դրսի հարուստներից ով ուզում է աջակցած լինել մի ժողովրդի տնտեսական դրութեան լաւանալուն, թող բարեհաճէ պարտք տալ ընկերութեան մի խոշոր գումար, որով թէ ինքն օգտված կը լինի— ստանալով ութ տոկոս շահ, և թէ մի և նոյն ժամանակ օժանդակած կը լինի Աշտարակի փոխատու խնայողական ընկերութեան ծաղկելուն, զարգանալուն ու առաջադիմելուն։

Մի օրինակ. Յովհաննու Վանք գիւղացի մի անդամ Զիմզիմօվների ձեռքից մի քանի տարի է, ինչ պանդխտում է Բալախանի աշխատելու, անցեալ տարի իր գոհութիւնն էր յայտնում, որ վերջապէս ազատվել է Երեքեանների «վերատի և պարտիմներից»։ Եւ զարմացմամբ յարեց, որ իր վերցրած 30 բուբլուն բանկին վճարելու է միայն երեք բուբլի շահ։

չի տայ որ մայրիկը չարաչար աշխատի, ուրիշների համար կար անէ, գուլպայ հիւսէ... Բայց հայրիկը դարձեալ չեկաւ և նա ստիպվեց Կաղանդն անցկացնել առանց ընծայի, առանց միրգի, տխուր...

Ցանկալած Լևոնը սթափվեց խուլ հեծեծանքների ձայնից։ Շուրջը նայեց։ Քիչ առաջվայ լուսողող եկեղեցին ընկղմվել էր մութի մէջ։ Ժամում մարդ չէր մնացել. միայն մայրը՝ կանգնած կողքին՝ հեկեկալով աղօթում էր։

—Մայրիկ, եթէ հայրիկին համար կուլաս, ես կաղօթեմ, որ Աստուած բարձն հայրիկը ղրկէ... մի լար...

Երեխան ջերմեռանդութեամբ միացրեց ձեռքերը, գլուխը յետ տարաւ, հայեացքը բարձրացրեց դէպի գմբէթը ու նոյն դիրքում մնաց մի քանի վայրկեան։

—Դռները փակելու ժամանակ է, խաչուն, ձայն տուեց յանկարծ ժամկոչը։

Մայրը՝ մի երկար հառաչ դրոշմեց զաւակի դէմքի վրա և նրա ձեռքից բռնելով՝ շտապեց դուրս գալ եկեղեցուց։

Դուրսը մութ էր։

Մի կատաղի քամի՝ ոռնալով վազում էր փողոցներից, հարբածի նման ընդ-արվում էր աջ ու ձախ շինութիւններին և կտուրներն ու ճամբաները իրանց շուշանէ վերարկուներից մերկացնելով՝ ձնի բլուրներ էր կազմում այս ու այն կէտի վրա։ Նրա անցքի առաջ, ապակիները սարսափից դողդողում էին։ Ծառերը՝ ցաւից ու յուսահատութիւնից պրկում էին իրանց նիհար բազուկները ու ճչում երկար, աղիողորմ։ Աստղերը գիշերը մնքում էր ճիչերի, հառաչանքների, ողբերի ծանրութեան տակ։ Տանջված կեանքը, ցաւոտ երկիրն է, որ բողոքում էր անողոք ու խուլ երկնքի դէմ։

Երբ տուն հասան, Լևոնը սաստիկ դժգունվել էր։ Նա դողում էր ամբողջ մարմնով։ Քաղցից ու ցրտից նրա շրթունքները կապտել էին։ Մայրը վհատութիւնից՝ ձեռքերը տրորեց ու կողկողաց.

—Ա՜խ, Աստուած, քու գութդ հատնի՞ էր. քու ողորմութեանդ բոլոր դռները փակվի՞ր են. առ հոգիս, գոնէ աս անմեղուկին չարչարվելը չը տեսնեմ...

Ցետոյ դարձաւ Լևոնին.

—Լևոն, զաւակս, անօթի՞ ես, հա։ Քեզի համար համով բան մըն եմ պահեր, տամ կեր և պառկէ։ Ո՞վ գիտէ, կարելի է հայրիկդ ալ...

Ցանկարծ քամին ահեղ շառաչով պայթեց դուրսը, ու դղրդացրեց ամբողջ տունը իր հիմքերից։ Իբրև մի վիթխարի, չարագուշակ բու, նրա ողբը տարածվում, ծաւալվում էր քաղաքի վրա վո՛ւ, վո՛ւ, վո՛ւ։ Հետզհետէ կատաղելով, նա խլում, վայր էր թափում տանիքների կղմինտրները, որոնց ներքև ապաստանած շները՝ ընդոստ զարթնելով՝ փոխում էին իրանց տեղերը, սարսափահար ու հեծեծագին։

Փոքրիկ երեխան դողդղալով կերաւ, ինչ որ մայրը դրեց նրա առաջ և որովհետև շատ էր մրսում՝ մտաւ անկողին։ Մայրը նրան վերմակով լաւ ծածկեց, նստեց կողքին և կռանալով նրա վրա, սկսեց շոյել նրա մազերը, տենդավառ ճակատը։

—Լևոն, հոգիս, գիտե՞ս վաղն ինչ է։

—Չէ՞ որ մայրիկ, Ծնունդ է ըստը։

—Հա, զաւակս, Ծնունդ է... գիտե՞ս ինչ բան է Ծնունդը։

—Ծնունդը... աղէկ չը գիտեմ... Զատիկը կարմիր հաւկիթներու օրն է... Մի՞տքդ է, մայրիկ, անցած զատկին ինձի հինգ հատ կարմիր հաւկիթ տուիր... հայրիկն ալ...

Մայրն անմիջապէս դէմքը շուռ տուեց, ծածկելու համար արցունքի երկու կաթիլ, որ անցեալի վերյուշումը մարգարտացրեց նրա աչքերում։ Լևոնի ուշադրութիւնից չը վրիպեց մօր լացը։

—Մայրիկ, նորէ՞ն կուլաս... եթէ հայրիկին համար է, ես ժամն աղօթեցի... Աստուած ձայնս կը լսէ... դուն չե՞ս ըսած, որ Աստուած պզտիկներուն աղօթքը շուտ կը լսէ...

—Ո՞ւր է, աղուորիկս, տես չեմ լար... ցուրտ է... ցուրտէն աչքերս ջրոտեցան...

—Հապա Ծնունդն ի՞նչ է մայրիկ...

—Ծնունդը, որդիս, Յիսուսի ծնած օրն է...

—Յիսո՞ւսն ո՞վ է, մայրիկ։

—Յիսուսը Աստուծու որդին է, հոգիս։

—Ի՞նչ, ըսել է Աստուծ ալ տղայ ունի։

—Այո՛... վաղը անոր ծնած օրն է, չի տեսա՞ր, աս իրիկուն ատոր համար ժամը զարդարեր էին, ամէն ճրագները վառեր էին... Ակէ հաղար ութ հարիւր իննսունը հինգ տարի առաջ...

Ու մայրն սկսեց պատմել իր պարզ, միամիտ լեզուով Ծնունդի պատմութիւնը։ Նա իր հասկացողութեան չափով բացատրեց Յիսուսի կեանքը, նրա նշանակութիւնը, նրա մատնութիւնն ու ողբերգական մահը։

Լևոն՝ ապշած, հիացած՝ մտիկ էր անում։ Այդ պատմութիւնը նրա վրա թողնում էր մի տարօրինակ դիւթական հէքիաթի տպաւորութիւնը։ Մօր խօսքերի ազդեցութեան տակ, նա յաջորդաբար անցնում էր հոգեկան այլ այլ վիճակներով. հրճուանքից՝ տխրութիւն, յոյսից՝ վհատութիւն, խանդավառութիւնից՝ հիասթափութիւն, խանդաղատանքից՝ ատելութիւն... Այդ խղճուկ մտուրը, այդ երգող հրեշտակները, այդ զարմացած հովիւները, հեռաւոր երկնքից աստղի առաջնորդութեամբ երկրպագելու եկող այդ թագաւորները ու աւելի յետոյ, Յուդայի մռայլ դէմքը, Գողգոթայի վրա ցցվող մահվան քստմնելի գործիքը՝ Խաչը, նրա երևակայութեան առաջ պարում էին ֆանտաստիկ պատկերների նման... Նա յիշեց, եկեղեցում, խորանի վերև, մոր գրկում հանգչած գեղեցիկ, գրաւիչ, վարդագոյն մանկիկին, որ ժպտում էր իր լուսապսակի տակից։

—Խաչեցի՞ն... մեռա՞ւ... մրմնջաց նա հազիւ լսելի շշուկով և մօր բերանից ջրի կկլոցի միօրինակութեամբ թափվող բառերի օրօրի տակ փակեց աչքերը ու երազեց, երազեց, երազեց...

Դուրսը քամին լռել էր։ Ու գիշերը, սպիտակ պատանքի մէջ պառկած քաղաքի մեռելութեան վրա տարածում էր սուգի անսասան քողը։ Սառած երկնքից մահը կաթիլ կաթիլ ընկնում էր ու տեղն ու տեղը անշնչացնում անպատսպար շներին, լքված թռչուններին ու անապաստան թափառիկներին...

(Կը շարունակվի)

Ընկերութեան մասին բաւական գրվեց, շատ սրտեր հրճուանքից բաբախեցին, լաւ յոյսեր տածեցին, և այսօր չը պէտք է թողնել, որ մարդիկ «մուրազախափան» լինեն։ Պէտք է օգնել ամեն կերպ։

Վաղ. Նահապետ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունվարի 13-ին

Հանգուցեալ Դաւիթ Շահլամեանցի ընկերները խնդրում են ի յիշատակ իրանց ուսումնասէր ընկերոջ մի օրինակ «Մշակ» ուղարկել լրագրութիւնից զուրկ մի որ և իցէ խուլ անկիւն, որի համար ներկայացնում եմ անցեալ տարի ընկերների մէջ հաւաքած 10 բուբլի։

Յ. Կ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անցեալ օրը Թիֆլիսի երդուեալ-հաւատարմատարները և նրանց օգնականները Մոսկվայի համալսարանի 150-ամեակի առիթով հեռաւեալ հեռագիրն ուղարկեցին. «Թիֆլիսի երդուեալ հաւատարմատարները և նրանց օգնականներն ուղարկում են իրանց ողջոյնը և շնորհաւորութիւնները ռուսաց համալսարաններից ամենահնին։ Բարեմաղթում ենք, որ նա այսուհետև էլ պահպանէ սրբազան աւանդութիւնները մաքրութեամբ և անձեռնմխելի։ Ջերմապէս ցանկանում ենք մեր սիրելի համալսարանին, որ իր կեանքի 151-դ տարում նա մտնի ազատ զարգացման ուղին՝ ակադեմիական լիակատար և անխախտ ազատութիւնով։»

—

Յունվարի 3-ին Ալէքսանդրօպոլի կայարանում գնացքի մէջ նկատվել է խոլերայով բռնված մի հիւանդ, որը մեռել է յունվարի 5-ին։ Պէտք է ասել, որ բացի այդ մի նկատված դէպքից, Գանձակի, Երևանի և Բագուի նահանգներում խոլերայի ուրիշ դէպքեր չեն եղել անցած շաբաթվայ ընթացքում։

—

Բուխարայից հեռագրում են «Н. О.»-ին յունվարի 12-ից. «Երէկ ատրճանակի հարուածով թեթև վիրաւորվեց փոխադարձ վարկի ընկերութեան նախագահ Լօրդկիպանիձէն։ Զարամիտը անյայտացաւ»։

—

Անցեալները, յունվարի 12-ին Թիֆլիսի Միքայէլեան փողոցում էլէքտրաքարշի վագոնի տակ ընկաւ մի մանկահասակ աղջիկ, հազիւ 12—13 տարեկան և կտոր-կտոր եղաւ։

—

Ստացանք «Ոսկի-Բարեկամ Հայ Ընտանեաց» անունը կրող 905 երեսանոց մի գիրք, որ «մթերեց Գրիգոր աւագ քահանայ Մանդակունին»։ Գիրքը տպված է Թիֆլիսի Վրաց տպարանում, գինը 5 բուբլի։

—

Պետերբուրգից հեռագրում են «Н. О.» լրագրին յունվարի 12-ից. «Շատ տեղերում լրագրական քիոսկները ջարդուփշուր են արված։ «Գոստինոյ դվօրը» փակված է, մնացած մագազինները և խանութները ևս շտապով փակում են։ Երէկ երեկոյեան փողոցներում տիրում էր մեռելային լռութիւն»։

—

Հրաւիրում ենք բարեգործ անձերի ուշադրութիւնը այրի տիկին Սահար Քամալեանի վրա, որն իր որբերով ընկել է անկարող և անել վիճակի մէջ, խոնաւ գետնայարկում, Միքայէլեան փողոցի № 28 տան մէջ։

—

Ինչպէս հաղորդել էինք, Կարսի զինուորական նահանգապետը դիմել էր Կովկասի Գիւղատնտեսական ընկերութեանը և խնդրել, որ տեղեկութիւններ հաղորդէ իրան Կարսի շրջանում գործող կաթնատնտես ինստրուկտորների մասին։ Այժմ, իբր պատասխան նահանգապետի դիմումի, Գիւղատնտեսական ընկերութիւնն ուղարկել է պ. Ա. Քալանթարի այդ առիթով ընկերութեանն արդէն 1903 թ-ի համար ներկայացրած ամենամեայ հաշիւը։

—

Ղզլարում, «Сѣв. Кав.» լրագրի ասելով, հիմնվում է փոխադարձ վարկի ընկերութիւն, որի նպատակն է ընկերութեան անդամներին առևտրական գործառնութիւնների համար անհրաժեշտ դրամագլուխներ ժամանակաբաշխել։ Կանոնադրութիւնն արդէն հաստատված է։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի դումայի ձայնաւոր Մ. Կ. Կիպիանին դումային ներկայացրել էր յայտարարութիւն Թիֆլիս քաղաքում ընդհանուր և պարտադիր ձրի ուսում մտցնելու վերաբերութեամբ։ Այժմ պ. Կիպիանին մեկնում է Ռուսաստանի զանազան քաղաքներ ուսումնասիրելու այն տեղերում տարրական կրթութեան գործի վիճակը զեմստվոների և քաղաքային ինքնավարութիւնների իրաւասութեան շրջանում։ Քաղաքագլուխ պ. Վերժիշեանը նրան տուել է հարկաւոր հաստատութեան թղթերը, որոնցով խնդրում է քաղաքագլուխներին և զեմստվոների վարչութիւնների նախագահներին՝ ցոյց տալու նրան ամեն տեսակ օժանդակութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՑԻՑ

—

Պարիզ, յունվարի 10-ին

Հայազգի տիկին Արմենուհի Բաբայեան-Կարբօնէլի Պարիզում նոր ցուցահանած նկարների մասին մեծ գովասանքով են խօսում եւրոպական թերթերը։ Ահա ինչ է տպված «L'Arménie» լրագրի յունվարի համարներից մէկում։

«Տիկին Արմենուհի Բաբայեան-Կարբօնէլ, որ 1903 թ. սալօնում ցուցահանած իր գեղեցիկ պատկերների համար պատիւ ունեցաւ ընտրվելու մասնակցող «La société nationale des Beaux-Arts» ընկերութեան, աշնանային սալօնում ցուցահանեց իր 3 սքանչելի ձիթանկարները, որոնց մասին ֆրանսիական ու անգլիական թերթերը արժանաւոր գովասանքներ շռայլեցին։ «Տիկին Բաբայեանը, գրում է «Journal des Artistes»-ը, մի արտիստուհի է, որ ինչպէս երևում է, պատկանում է M. Carrière-ի դպրոցին։ Մենք հետաքրքրվեցինք «Բժշ. Կ-ի պատկերով», որի մեջ լուսաւորված դէմքը աչքի է ընկնում շրջապատող ստուերների միջից. «Երիտասարդ աղջկայ գլուխ» պատկերը նոյն ձևով և նոյն խնամքով մշակված է շրջապատով։ Վերջապէս «Մոհանոցի մի անկիւն» նկարը մեզ թւում է բարեխղճաբար ուսումնասիրված. այդ պատկերը կիսալոյսերի ստուերների մի աջող համախմբում է ներկայացնում։

«Revue Libre» գտնում է, որ առաջին ձիթանկարը «մեղմ ու լուրջ է», երկրորդը՝ «լաւ է», իսկ երրորդը՝ «հմտակրելի իր ջերմ գոյներով մի մոայլ մթնոլորտի մէջ»։ Անգլիական «Morning Post» լրագիրը հիանում է անխոնջ հայ արտիստուհու այս նոր ստեղծագործութիւնների մեղմութեան վրա։

Տ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յունվարի

ՎԻԵՆՆԱ։ Զեխերը վճռեցին դադարեցնել օբստրուկցիան։ Գաուչի ճառը նպաստաւոր տպաւորութիւն թողեց։ Գաուչ մատնացոյց արեց ազգային խաղաղութեան, արդիւնաբերութեան նոր կազմակերպութեան և բանուորական ապահովագրութեան ռէֆօրմի անհրաժեշտութեան վրա։ Լիւգէր հարցապնդում արեց մամուլի յարձակումների վերաբերմամբ կաթոլիկ եկեղեցու հիմնարկութիւնների վրա։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ։ Վլադիվոստոկի պետական բանկի բաժանմունքը ծանուցանում է, որ պահեստի տուանդների տալը տեղի կունենայ Վլադիվոստոկում մինչև յունվարի 15-ը, իսկ յետոյ բոլոր աւանդները կուղարկվեն Խաբարովսկ, որտեղից և կարող են պահանջվել աւանդատէրերի հաշիւին պօստով կամ հեռագրով։

ԲԵՐԼԻՆ։ Աֆրիկա ուղարկվող զօրքերի օֆիցէրներին և զինուորներին սկսեցին նախապաշտպանողական պատուաստումներ անել տիֆի դէմ, որովհետև այդ տարափոխիկ հիւանդութիւնը գոյութիւն ունի պատերազմական գործողութիւնների շրջանում։

ԷՍՍԷՆ։ Բուր շրջանում բանում են միայն 3535 հանքագործ բանուորներ. 230,000 հոգի չեն դուրս եկել բանելու։

ԿՕՎՆԱ։ Տիլմանս եղբայրների մաֆիոզ, պտուտակներ և մեխեր պատրաստող գործարանում առաւօտեան սկսված գործադուլը երեկոյեան դէմ բռնեց բոլոր գործատնային, արդիւնաբերական հաստատութիւնները և տրամվայները։ Էլէտրական կայարանը չէ գործում։ Մագազինները փակվեցին։ Ձեռք առած միջոցների շնորհիւ, փողոցային անկարգութիւններ և հարբածների աղմկալի ցոյցեր տեղի չունեցան։ Գիշերը հանգիստ անցաւ։ Առաւօտեան յայտարարութիւն երևաց, որի մէջ նահանգապետը հրաւիրում է բանուորներին չենթարկվել չարամիտ անձանց չար յորդորներին և վերադառնալ սովորական պարապմունքներին, խոստանալով աջակցել, որպէս զի քննութեան ենթարկվի և բաւարարութիւն տրվի այն միջնորդութիւններին, որ բանուորները ներկայացրել են իրանց տէրերին, նախազգուշացնելով, որ փողոցային անկարգութիւնները կը դադարեցնվեն վճռական միջոցներով, և եթէ հարկաւորվի՝ զինաւորված ոյժով։

ԽԱՐԿՕՎ։ Նահանգական զէմստվօի ժողովը որոշեց հրատարակել ամսական տպագրական օրգան, «Вѣстникъ Харьковскаго Земства» ամսաթերթ և յատկացնել դրա հրատարակութեան առոյժմ 10,000 բուբլի։—Մոսկվայի համալսարանին ողջոյն է ուղարկված։

ՄՈՍԿՎԱ։ Քաղաքագլուխ է ընտրված նախկին քաղաքագլուխ իշխան Գոլիցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գենեբալ-լէյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1905 թ-ի յունվարի 11-ից. «Յունվարի լոյս 10-ի գիշերը մեր կամաւորները խուզարկութիւն կատարեցին Շանլանցզիից դէպի հարաւ, յետ մղելով եապօնական առաջապահները։ Խուզարկութեան ժամանակ սպանվեցին պրապօրշչիկ Գալուպէն և զաուրեադ պրապօրշչիկ Տիխանով և մի քանի զինուորներ սպանվեցին ու վիրաւորվեցին։ Կէս գիշերին դէպի լոյս յունվարի 11-ը մի ոչ-մեծ զօրաբաժին բուռն յարձակումով դուրս մղեց եապօնացիներին Սախէպուից դէպի հարաւ-արևելք գտնվող փոքր ամրութիւնից, որի ժամանակ մեզ մօտ վիրաւորվեց մէկ զինուոր։ Գիշերվայ ընթացքում իրանց ամրութիւնը վերադարձնելու եապօնացիների կրկնակի փորձը յետ մղվեց»։

ՊԱՐԻԶ, 12 յունվարի։ Հեռաւոր Արևելքից Մարսէյլ եկած պօստային շոգենաւը հաղորդում է, որ Ջիբուտի նաւահանգստում համակրական ցոյցերի փոխանակութիւն եղաւ ֆրանսիական «Աուստրալիէն» շոգենաւի և ռուսական նաւերի էսկադրայի միջև ծովապետ Ֆէլկերզամի հրամանատարութեան տակ։ «Միսսոյ Վելիկի» և «Աուստրալիէն» նաւերի օֆիցէրները հրաւիրում էին միմեանց շամպայն խմել։ «Աուստրալիէնի» հեռանալու վայրկեանին ռուսական էսկադրայի էկիպաժը ողջունեց ֆրանսիական նաւին բարձրաձայն բացականչութիւններով։ Ֆրանսիացիները պատասխանում էին, իսկ ռուս երաժիշտների խումբը նուագում էր մարսէլիէզ։ «Պլտի Ժուրնալ» լրագրում հրատարակված է մասնաւոր հեռագիր Տօկիօից, որի մէջ ասված է, որ եապօնական կառավարութիւնը հէնց նոր հեռագրով հարցրեց մարշալ Օյամային, թէ արդեօք նա յարմար է համարում սկսել այժմ յարձակում Կուրոպատկինի բանակի դէմ։

ՇԱՆԳՀԱՅ, 11 յունվարի։ Տօկիօից ստացված հեռագրի համաձայն, եապօնացիները երէկ յետ մղեցին ռուսական հեծելազօրքի մի էսկադրօն Վէյցուկիից դէպի հիւսիս-արևմուտք, Խիէնչենի մօտ։ Եապօնացիները գրաւեցին Վէյցուկը, իրանց ձեռքը գցելով զէնքը և ձիերը։ Մի ուրիշ զօրաբաժին յարձակում գործեց և ցրվեց ռուսներին Զուչիանի մօտ Եալուի վերին հոսանքի վրա։ Ռուսների կորուստները 20 մարդով աւելի են եապօնացիների կորուստներից, որոնք գերի բռնեցին նոյնպէս 5 ռուս օֆիցէրների և զինուորների զէնքով և ձիերով։ Պորտ-Արտուրի հիւանդանոցներում գտնվում են 15,000 վիրաւորներ։ Անձնատուր լինելու օրից 500 մարդ մեռան։ Ռուս վիրաբոյժները յոգնած են և տանջվում է՛ հայրենիքի կարօտից։

ՏՕԿԻՕ, 11 յունվարի։ Վլադիվոստոկից Մորջի եկած շոգենաւը հաղորդում է, որ «Բոսսիա» կրէյսերը կարկատված է, իսկ «Գրոմոբոյ»-ը մտց ված է նաւակայանը։ Ականաւորի խումբը բաղկացած է 20 նաւերից։

ՊԷԿԻՆ, 11 յունվարի։ Չինական կառավարութիւնը պատասխանելով Միացեալ-Նահանգների յայտագրին չէզոքութեան վերաբերութեամբ, մատնացոյց է անում «Բէշիտէնի» ականանաւի հետ տեղի ունեցած դէպքի վրա։ Չինաստանը պատժեց այն ժամանակ ծովապետ Սաին, և ներկայումս չինական կառավարութիւնը բանակցութիւններ է վարում ականանաւը վերադարձնելու վերաբերմամբ։ Չինաստանը ապացուցանում է, որ ռուսների մեղադրանքը անհիմն է։

ՇԱՆԳՀԱՅ, 11 յունվարի։ Պորտ-Արտուրի շրջականները մաքրվում են ռուսական ականներից։ Ցոյս ունեն, որ նաւահանգիստը շուտով նորից կը բացվի։ Այսօր Զիֆու եկան 13 ջօնկաներ և երեք փոխադրանաւեր պատերազմին չը մասնակցող անձերով։ Կապիտան Կարավաեվ, որը հրաժարվեց խօսք տալուց եապօնացիներին, շորերը փոխելով, փախաւ ջօնկաներից մէկից։

ԵՕԿՕՀԱՄԱ, 11 յունվարի։ Ոմն Կօլլինս, կիսաազատուգալացի կիսաչինացի, բայց բրիտանական հպատակ, դատապարտվեց այսօր 11 տարվայ բանտարկութեան նրա համար, որ յայտնել է Ռուսաստանին զինուորական գաղտնիքներ։ Եապօնական գործակալը, իրան դաւաճան ձևացնելով, գրաւեց Կօլլինսի վստահութիւնը։ Վերջինս իրան արդարացնելու համար հաւատացնում էր, թէ նա խաբել է ռուսներին, բայց նրա մօտ գտնվեցին ծածկագիր հեռագիրներ, որոնց թարգմանութիւնը կատարելապէս հերքեց պաշտպանողական ճառը։

ԼՕՆԴՕՆ, 12 յունվարի։ Անգլիական «Տէյլլուս» շոգենաւին երէկ աջողվեց փախչել եապօնական ականանաւերից և Վլադիվոստոկ բերել բրնձի մեծ բեռ։

13 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ «Նորին Կայսերական Մեծութեան Բարձրագոյն հրամանով ֆինանսների մինիստրը և Ս. Պետերբուրգի գեներալ նահանգապետը սրանով յայտարարում են. Հասարակական կեանքի խաղաղ ընթացքը Ս. Պետերբուրգում վերջին օրերս ընդհատվեց՝ գործարաններում աշխատանքները դադարացնելով։ Բանուորները թողնելով աշխատանքը ի ցաս իրանց և իրանց գործարանատէրերին՝ մի շարք պահանջներ առաջարկեցին, որոնք վերաբերում են նրանց փոխադարձ յարաբերութիւններին գործարանատէրերի հետ։ Ծագած շարժումից օգուտ քաղեցին անբարեմիտ մարդիկ, որոնք բանուորներին զէնք շինեցին՝ իրանց դիտաւորութիւններն իրագործելու համար և աշտատող մարդկանց գայթակղեցրին խաբուսիկ և երազական յոյսերով և ուղիղ ճանապարհից հանեցին։ Այս յանցաւոր ագիտացիայի հետևանքն այն եղաւ, որ մայրաքաղաքում տեղի ունեցան կարգի բազմաթիւ խախտումներ և այսպիսի դէպքերում անխուսափելի զինուորական ոյժի միջամտութիւնը։ Խորապէս ցաւալի են այս երևոյթները։ Խռովութիւն յարուցանելով՝ չարամիտ մարդիկ կանգ չառան այն դժուարութիւնների առաջ, որոնց ենթակայ է մեր հայրենիքը ներկայ ծանր պատերազմական դրութեան ժամանակ։ Նրանց ձեռքում Պետերբուրգի գործարանների աշխատաւոր դասակարգը կոյր գործիք դարձաւ։ Պետերբուրգի գործարանների բանուորները, առանց պարզ հաշիւ տալու իրանց, որ բանուորների անունով յայտարարում են այնպիսի պահանջներ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն իրանց կարիքների հետ, յայտարարելով այսպիսի պահանջներ և դադարեցնելով իրանց սովորական գործերը՝ մոռացան նաև այն, որ կառավարութիւնը միշտ հոգածութիւն է ունեցել նրանց կարիքների մասին, ինչպէս ունի և այժմ, և այդ կարիքներին բաւարարութիւն կը տայ՝ որչափով որ հնարաւորութիւն կը ներկայանայ։ Բայց կառավարութեան այսպիսի գործունէութեան համար նախ և առաջ հարկաւոր է, որ կարգը վերականգնի և բանուորները վերադառնան իրանց սովորական գործին։ Աղմուկների միջոցին անհերևակայելի է կառավարութեան հանգիստ և բարեացակամ աշխատանքը յօգուտ բանուորների, և որքան էլ արդարացի լինեն նրանց դժուարութիւնները՝ անկարելի է, որ նրանք բաւարարութիւն գտնեն անկարգութիւնների և յամառութեան միջոցով։ Բանուորները պէտք է հեշտացնեն կառավարութեան գործը՝ բարւոքելու նրանց դրութիւնը, և այս բանը նրանք կարող են անել միայն մի ճանապարհով—հեռանալով այն մարդկանցից, որոնց պէտք է միայն խռովութիւն, որոնց համար օտար են բանուորների իսկական օգուտները, ինչպէս օտար են և հայրենիքի իսկական շահերը, և որոնք այս օգուտներն առաջ են բերում իբրև մի պատրուակ՝ առաջացնելու համար խռովութիւն, որ ոչ մի առնչութիւն չունի այս օգուտների հետ։ Բանուորները պէտք է վերադառնան իրանց սովորական աշխատանքին, որ նոյնքան հարկաւոր է պետութեանը՝ որքան և իրանց բանուորներին, որովհետև առանց աշխատանքի թէ իրանք և թէ իրանց կանանց և երեխաներին ենթարկում են աղքատութեան։ Եւ աշխատանքի վերադառնալով՝ թող յիշէ բանուոր դասակարգը, որ նրա կարիքները մօտ են Թագաւոր Կայսրի սրտին, ինչպէս և բոլոր հաւատարիմ հպատակների կարիքները, և որ վաղուց չէ, որ Նորին Մեծութիւնը Իր անձնական բարեհաճութեամբ հրամայել բարեհաճեց ձեռնարկել մշակելու բանուորներին ապահովագրելու հարցը, որի նպատակն է նը-

բանց ապահովել հիւանդութեան և վնասուածքներ ստանալու դէպքում, և որ այս միջոցով չեն սահմանափակվում Թագաւոր Կայսրի հոգսերը բանուորների բարիքի մասին, այլ որ սրա հետ միասին Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճութեամբ ֆինանսների մինիստրութիւնը պատրաստ է ձեռնարկել մշակելու օրէնք՝ աւելի ևս կրճատելու աշխատանքի ժամանակը և այնպիսի միջոցներ, որոնք բանւոր դասակարգին օրինական հնարաւորութիւն տային իրանց կարիքները քննելու և արտայայտելու։ Թող գիտենան նոյնպէս գործարանների և ուրիշ արդիւնաբերական հիմնարկութիւնների բանւորները, որ աշխատանքի վերադառնալով՝ նրանք կարող են վստահ լինել, որ կառավարութիւնը կը պաշտպանէ նրանց, նրանց ընտանիքի և տան անձեռնմխելիութիւնը։ Կառավարութիւնը աշխատել ցանկացողներին կը պաշտպարէ յանցաւոր ոտնձգութիւններից նրանց աշխատանքի ազատութեան վրա այն չարամիտ մարդկանց կողմից, որոնք բարձր բղաւում են ազատութեան մասին, բայց ազատութիւնը հասկանում են միայն իբրև իրաւունք՝ բռնութեան միջոցներով թոյլ չը տալ աշխատել իրանց այն ընկերներին, որոնք պատրաստ են դիմել իրանց խաղաղ գործին։ Ֆինանսների մինիստր ստատս-սեկրետար Վ. Կոկովցեվ։ Ս. Պետերբուրգի գերերալ-նահանգապետ Նորին Մեծութեան սվիտայի գեներալ-մայոր Դ. Տրէպով։

13 յունվարի

ԲԱԳՈՒ, 12 յունվարի։ Սաստիկ ձիւների պատճառով անդրկովկասեան երկաթուղիները հրաժարվեցին պատասխանատուութիւնից՝ բեռներ հասցնել իր ժամանակին Բագու-Բալաջարի և Բագու-Սաբունչի գծերով։ Նաւթանցքը դադարեցրեց աշխատանք Բիբի-Էյբաթում։ Երկրորդ օր է պօստ չը կայ։ Քաղաքում տրամվայները կանգնեցրված են։ Հաղորդակցութիւնն ընդհատված է գործարանա-արդիւնաբերական շրջանի հետ։ Բալախանիի նաւթահանքերի մեծամասնութեան մէջ ջուր չը կայ և չեն աշխատում։ Ընդհանրապէս առևտուրը կանգ է առած։ Բօրսան գործունեայ չէ։

ՐԵԱԶԱՆ, 12 յունվարի։ Նահանգական ազնուականութեան ժողովը որոշեց մատուցանել Նոցա Մեծութիւններին հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ՝ յայտնելով ազնուականութեան պատրաստականութիւն ծառայել թէ պատերազմի դաշտում և թէ պետութեան ներքին բարեշինութեան գործում։

Կ. ՊՕԼԻՍ, 12 յունվարի։ (Սեփ. թղթակ.)։ Զինուորական մինիստրը նոր թնդանօթային բատարէաներ է ուղարկում Մակեդոնիա՝ ի նկատի ունենալով յունական չէտաների աստիճանաբար մեծանալը Սալոնիկի վիլայէտում։ Մեծ վիզիրը անդադար խորհրդակցում է յունական մինիստր Գրիպարիսի հետ։ Նրանք համաձայնութեան եկան գործողութեան նախազգուշական միջոցների վերաբերմամբ վերոյիշեալ չէտաների դէմ։

ԲԵՐԼԻՆ, 12 յունվարի։ Աւստրօ-գերմանական առևտրական դաշնագիրը ստորագրված է։

ՍՕՖԻԱ, 12 յունվարի։ (Սեփ. թղթակ.)։ Ամբողջ բուլգարական ժամուլը միաբերան ցաւակցութիւն է յայտնում Պետերբուրգում տեղի ունեցած այն դէպքերի առիթով, որ առաջացել են բանւորների գործադուլի և յուզմունքների պատճառով։ Լրագիրները ջերմ բարեմաղթութիւններ են անում, որ անկարգութիւնները վերջանան, որոնք մանաւանդ անտեղի են պատերազմի պատճառով, որ Ռուսաստանը ստիպված է վարել Հեռաւոր Արևելքում։

ԼՕՆԴՕՆ, 12 յունվարի։ Բէնկէնդորֆ հաղորդեց դեսպանութեանը, որ նա կը վերադառնայ Լոնդոն յունվարի 26 ին։

ԽԱՐԿՕՎ, 12 յունվարի։ Նահանգական զէմստվոյի ժողովը որոշեց միջնորդել, որ ամսական 200 հազար բուբլի փոխ տրվի պահեստի զինուորների ընտանիքներին նպաստներ բաժանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Вѣдомости Петербургскаго Градоначальства» լրագրում տպված է. «Յունվարի 12-ի ընթացքում կարգը մայրաքաղաքում խախտված չէ եղել։ Մի քանի գործարաններում և գործատներում բանւորները սկսեցին աշխատել։

ՊԱՐԻԶ, 12 յունվարի։ Վկայ Վուդ երկար խօսում է իր տեսած ռուսական զանազան նաւախմբերի մասին։ Նա հաղորդում է իւրաքանչիւր պատերազմական նաւի և փոխադրանաւի կայմերի և խողովակների թիւը և որոշում է այն ուղղութիւնը, որին հետևում էին այդ նաւերը։ Առաջարկված հարցին վկան պատասխանում է, թէ ինքն նկատել է, որ իւրաքանչիւր էսկադրայի առաջին նաւը ընթանում էր ծովապետի դրօշակի տակ։ Այն հարցին, թէ արդեօք նաւերը գնում էին այն սովորական ճանապարհով, որով առհասարակ ընթանում են ուրիշ նաւերը, վկան պատասխանում է, որ «ոչ»։ Ապա այն հարցին, թէ չը նկատեցիք դուք ուրիշ պատերազմական նաւեր, վկան պատասխանեց՝ ոչ, ես չը տեսայ ուրիշ նաւեր, բացի հէնց նոր իմ նկարագրածներից։ Ռուսաց կառավարութեան գործակալը հրաժարվում է վկային հարցեր առաջարկելուց, որը հեռանում է։ Նիստը դադարեց 10 ժամ 55 րոպէին։ Ծովապետ Ֆուրնիէ հրամայում է նորից ներս բերել առաջին վկային և թողնում է, որ փոխ-ծովապետ Դուբասով հարց ու փորձի ենթարկէ նրան։ Ծովապետը հարցրեց նրան, թէ դուք ի՞նչպէս որոշեցիք նաւի դրութիւնը կէսօրին։ Երկու տեսակ դիտողութեան օգնութեամբ. որոշումներ արվեցին մօտ 9 ժամ 20 րոպէին երկարութիւնը որոշելու համար։ Էկսպէրտները ստուգում են ժամանակաչափը ծովային իւրաքանչիւր ճանապարհորդութիւնից առաջ։ Վերջին ստուգումը տեղի ունեցաւ հոկտեմբերի 6 ին։ Ո՞րքան էք դուք որոշում տարածութիւնը սովորական ճանապարհի և այն ուղղութեան միջև, որով անցան ռուսական նաւերը։—Նրանք 10—12 մղոն շեղվեցին սովորական ճանապարհից դէպի արևմուտք։ Վկան կամեցաւ աւելացնել, որ հէնց ինքն Բալտիական և Հիւսիսային ծովերի լոցման է և ինքն լոցմանի վկայական ունի։ Դրանից յետոյ վկան հեռացաւ։ Նիստը փակվում է մինչև երեք ժամը կէսօրից յետոյ։ Յանձնաժողովի նիստը վերսկսվեց երեք ժամին։ Հասարակութիւնը առաւօտվանից աւելի քիչ հաւաքվեց։ Ծովապետ Ֆուրնիէ հրամայում է ներս բերել երկրորդ վկային՝ անգլիացի Զօջ Բիչինգին, ձկնորսների ընկերութեան դիրեկտորին։ Վկան ասում է, որ ձկնորսային նաւատորմը բաղկացած էր 37 շոգենաւերից և վեց նաւերից, որոնք նշանակված էին ձուկ բռնելու համար։ Նա երկար ժամանակութիւններ է հաղորդում որսալու պայմանների մասին։ Նրա տաղտկալի և երկար ցուցմունքը ընդհատում է անգլիական կառավարութեան փաստաբանը, որը օգտակար է գտնում որոշեալ հարցեր առաջարկել վկային։ Վկան յայտնում է, որ ձկնորսները չը տեսան եապօնական ոչ մի պատերազմական նաւ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՈԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԿԵՂ

Լոյս տեսաւ «ՇԿԵՂ»-ի Ե. պրակը, տասը գեղարուեստական նկարներով, արժէ 1 ր. 20 կ. տասնեակով գնողին հատը 1 բուբլի։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

մի այլ գեղարուեստական ընտիր հրատարակութիւն տպագրված խաւաքարտի վրա (բրիստոլ կարտոն)

ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ 1905 Թ.

Տ. Սիրանոյշի 30-ամեայ բեմական գործունէութեան յիշատակին, 30×40 սմ. մեծութեամբ, զանազան գերերի մէջ և քաղաքացիական տարազով։

Արժէ Թիֆլիսում . . . հատը 20 կ.
Իսկ դաւառների համար . . » 25 »
(Դաւառից 10-ից պակաս պատուէրները չեն կատարվում),
իսկ 10 ից աւելին կը հաշուի հատը . 20 կ.
Ալբոմ և Օրացոյց միասին գնողին՝ Օրացոյցը կարժենայ . . . 10 »

Նպատակայարմար տօնական ընծայ կարող են լինել մեր Ալբոմները, Հայ գործիչների բաց նամակները (130 տեսակ—100 ով՝ 2 ր. 50 կ։ իսկ 1000-ով՝ միայն 20 ր.), Օրացոյցը և այլ ընտիր գեղարուեստական հրատարակութիւնները։ Շտապեցէք դիմել մեզ հետևեալ հասցէով.
Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ. 13—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեմինսկայա փ. № 8.
ա. օ.

ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլօլակի փող. № 6.
(ա. օ.) 34—50

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Զեռնարկութիւն Կայսերական Թատրօնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի

Այսօր, ուրբաթ, յունվարի 14 ին ժամանակցութեամբ տ.տ. Վիկշեմսկայի, Դօնսկոյ-Էյխենվալդի, Բունակովայի, Խարիտօնովայի. պ.պ. Բոգդանովիչի, Սիկաչինսկու, Կոմարովի, Պոլուեանովի, Գալեցկու և Սպերանսկու կը ներկայացվի

I ՄՕՑԱՐՏ և ՍԱԼԻԵՐԻ
Բիսկի Կօրսակովի

II ԳԻՒՂԱԿԱՆ ՊԱՏԻՒ, երաժ. Մասկանի.

III ՄԱՆԴԱՐԻՆԻ ՈՐԴԻ,
օպերա 1 գործ. երաժ. Կիւիի։

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։

Վաղը, շաբաթ, յունվարի 15-ին բենեֆիս Պ. Ի. Պոլուեանովայի կը ներկայացվի «ԵՎԳԷՆԻՅ ՕՆԷԳԻՆ», օպերա 3 գործ. 6 պատկ. երաժ. Չայկովսկու։ Տեղերի գները սովորական են։ Կիրակի, յունվարի 17 ին վերջին անգամ կը ներկայացվի «ԲՕԿԿԱՉԻՕ», կոմիք. օպերա 3 գործ. երաժ. Զուպպէի։

Շուտով կը կայանայ բենեֆիս ընդհանուր կասսայի գանձապահուհի Մ. Դ. Սարելկովայի, մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ։

Տոմսակները ծախվում են։

Լոյս տեսաւ
Տօնական նուէր մեծերի ու փոքրերի համար
Ռօբինզօն Կրուզօ
Թարգ. Ս. ԹԱՌԱՅԵԱՆՑ
(Շքեղ, ընդարձակ հրատարակութիւն, 29 գոյնզգոյն պատկերներով)։
Գինն է 1 բուբ. 25 կոպ.
Դիմել հայ գրավաճառներին։ 5—5

Վաճառվում են
Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
Երկու նոր աշխատութիւնները
I
ՄԷՐ ԵՒ ԽԱՆԴ (մի պատկերով) 20 կ.
II
ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »
Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտէնբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցները, իսկ Բագուում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցը։ 2—25

ԱՐԱՔՍԵԱՆԻ ՀԱՒԱՔԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Շաբաթ, յունվարի 15-ին տեղի կունենայ
Պ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
ՀԱՄԵՐԳԸ,
որի երրորդ բաժնում կը լինեն պարերգ։
Սկիզբն է 8½ ժամին երեկոյեան։
Տոմսակները (1 ր. 50 կ.-ից մինչև 20 կոպ) վաճառվում են Թատրօնի կասսայում։
Խմբական փորձերը կը լինեն ամսխ 12-ին և 14 ին նոյն թատրօնում, երեկոյեան ժամ. 5-ն։
(ա. օ.) 5—6

«ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ»
գրախանութում վաճառվում են։
Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ
հետևեալ աշխատութիւնները.
«Կոտրված սիրտ», վէպ, 170 երես (սակ.) 40 կ.
«Մեռած ծովում», վէպ, 390 երես, 1 ր. — »
«Հարազատ գծեր», պատկերներ — 15 կ.
«Ղօնաղլուղս Ֆաց», վոդէվիլ 1 ար. 2 պ. 20 »
Դիմել. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ Г. Галустянцу.
Астраханъ, Акиму Соловянцу. 2—5

Թիֆլիսի պ. նահանգապետի առաջարկութեամբ Թիֆլիսի Մեշչանների Ուպրաւան սրանով յայտարարում է, որ ԹԻՖԼԻՍԻ ՄԵՇՉԱՆՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1905—1907 եռամեակի համար տեղի կունենան Մեշչանների Աւագի պաշտօնակատարի հսկողութեամբ Մեշչանների Ուպրաւայի շինութեան մէջ՝ ամեն մի ոստիկանական քաղաքամասի համար առանձին, երեկոյեան ժամը 7-ին, հետևեալ օրերը.

22	յունվար.	I քաղաքամասի—7	պատգամաւոր	28	փետ. յունվ.	VI քաղաքամասի—7	պատգամաւոր
24		II » 4	»	29		VII » 18	»
25		III » 5	»	31		VIII » 10	»
26		IV » 5	»	1		IX » 10	»
27		V » 18	»	3		X » 15	»

Հրաւիրելով մեշչանների դասի անձերին, որոնք նշանակված են Ուպրաւայի ցուցակներում և որոնք իրաւունք ունեն ընտրութիւններում ձայն տալու, մասնակցելու յիշված ընտրութիւններում հաւասարձայն բնակված քաղաքամասերի, այդպիսի անձերին խնդրում է Մեշչանների Աւագի պաշտօնակատարը՝ մինչև ընտրութիւնների օրը, վաղօրօք ձեռք բերել որոշված տոմսակները ժողովատեղին մտնելու իրաւունք ունենալու հասար. առանց այդ տոմսակների ոչ ոքի չեն թոյլ տայ ընտրութիւններին մասնակցելու։ Տոմսակները տրվում են Ուպրաւայում ամեն օր առաւօտեան 9—2 ժամը և երեկոյեան 8—10 ժամը։

Ընտրված պատգամաւորները, իրանց կոչման մէջ հաստատվելուց յետոյ, առանձնապէս կը հրաւիրվեն Ուպրաւայի պաշտօնատար անձեր ընտրելու համար։ (ո. կ.) 1—2

ԴԷՊՕ
ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„Եղբ. Յակոբջանեանցներ եւ Սարգսեանց“

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Միքայէլեան կամուրջ, Քամոյեանի տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջին տարազով պատրաստած հագուստներ։
Գները չափաւոր են և առանց սակարգութեան։ (ա. օ.) 4—100

ՆԵՐԱՐԿՈՒՄՆ ՄԱՏԻԿՈՒ
(INJECTION AU MATICO)

Գրիպս և ընկ։ գեղագործների թոյլ է տրված Ռուսաստանում։ Այս հեղուկի մէջ շահագործված են պերուանեան Մատիկօ բոյսի յատկութիւնները, մի բոյս, որ զարմանալի կերպով բժշկում է հոնորէյը (սերմնաթափութիւն) և մի քանի տարվայ ընթացքում համաշխարհային հռչակ է ստացել։ Կարճ ժամանակում բուժում է ամենազօրեղ սերմնաթափութիւնները։
Պարիզ, 8 Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(2, 17) 19—19

ԵՂԲ. Ա. ԵՒ Ա. ՄԻԼՕՎՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
Մանրածախի խանութում
(Գոլովինսկի պրոսպէկտ, կադէտների կօրպուսի դիմացը)

ստացվել են սեզօնի նորութիւնները կազմող զգեստների, կոստիւմների և շապիկների համար, ռուսական և արտասահմանեան գործարաններից՝—մետաքսէ, բրդի և ֆանտազի կտորներ, նոյնպէս և ամեն գոյնի մահուդներ, ինչպէս սեզօնի գլխաւոր պահանջը՝ բոլոր դպրոցական հաստատութիւնների համար համազգեստների կտորներ։
Ստացված է քթան և սեղանատան համար սպիտակեղէն Ա. Ա. ԼՕԿԱԼՕՎԻ ընկերութեան գործարանից։
Ստացվել են պարիզեան նորը և ճաշակաւոր պատրաստի
ԶԳԵՍՏՆԵՐ ԲԱԼԵՏԻ ՀԱՄԱՐ
Ամենայն օր ստացվում են նորութիւններ եկող սեզօնների համար։
Գներն առանց սակարկութեան։

Օտար քաղաքացի պ.պ. գնողների համար ուղարկվում են նմուշներ. պատուէրները կատարվում են շուտ և կանոնաւոր։ 1—1

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го января 1905 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.